
ՉԽՈՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ «ՍԱԲՐԻ ԽԴԾԻՎ»
(ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԻԿՆԻԿ) ՀԵՔԻԱԹԱԽՄԲՈՒՄ

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԱՆ

Տիկնիկները մեծ դեր են կատարել տարբեր ժողովուրդների կյանքում: Դրանց անգամ կերակրում էին՝ կարծելով, թե ննջեցյալների հոգիները վերաբնակվում են վերջիններիս մեջ: Այդպիսի տիկնիկներ են ունեցել ռուսները, չինացիները, եգիպտացիները, չուկչաները, այթայացիները: Հնագույն հավատալիքների համաձայն՝ տիկնիկները՝ իբրև մայրական տոհմի հրաշագործ ոգիներ, նորահարսին օգնում էին ամուսնու տանը՝ օտար տարածքում հատկապես ծննդաբերության ժամանակ: Վերոնշյալ տիկնիկները որք աղջիկներին նույնպես առնում էին իրենց հովանավորության տակ՝ պաշտպանելով խորթ մայրերի հալածանքներից՝

Հայոց մեջ ծիսական տիկնիկները՝ խրճիկները, լայն կիրառության շնորհիվ ունեցել են տարբեր անուններ՝ Ասիլ-Բասիլ, Վասիլ, Ակլատիզ, Խլվլիկ, Խրտվիլակ, Նուրին, Ճոլի, Գողի, Վիճկի Արուս, Խուչկուրուրու, Ուրբաթեկին, Պուրպատիկին, Բորբատիկին և այլն, որոնց ծիսահմայական գործության հավատով հանրույթը փորձում էր համապատասխան աստվածություններից հայցել բերք ու բարիքի պահպանություն, կենսամթերքների առատություն, չար ուժերից պաշտպանվածություն, բարեբախտություն, պտղաբերություն, արդարության ապահովություն:

Ստորև քննության կառնենք նորահարսին սատարող նախամոր ոգի՝ օժիտի տիկնիկի (համբերության «Սաբրի խրճիկ») հետ կապված հավատալիքների վերապրուկները, որոնք կենցաղավարում են հայկական մի խումբ հեքիաթներում, ինչպիսիք են՝ «Անբախտ ախճիգը բախտավերվում ա» (Արցախ, հավելված), «Սրեռային հու ախճրկանը հաքյաթը» (Ղարաբաղ), «Սափուր-սափուր խրցիկ» (Բուլանըխ), «Յոթ տարվան մեռել» (Տուրուբերան), «Սամուր-սամուր խրճիկ» (Մուշ), «Լւիբլւբու խրճիկ» (Վան-Վասպուրական), «Մեռուկ Մանուկ» (Արծկե), «Սաբրի խրճիգ» (Խնուս), «Սւբրի տիկին» (Պարսկահայք), որոնց վերլուծությունը հնարավորություն է ընձեռում որոշ եզրահանգումներ անել հազարավյակների ընթացքում մեզանում մշակված ամուսնարնտանեկան հարաբերությունները կարգավորող բանավոր կանոնների վերաբերյալ:

Վերոնշյալ հեքիաթախմբի ծագման հայրենիքը Պատմական Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններն են և համապատասխանում են Աարնե-Թոմփսոն-Ութերի (ATU)

¹ Е. Мелетинский. Герой волшебной сказки. М., 1958, с. 185–186.

միջազգային նշացանկի 894 թվահամարին²: Հայ բանագիտության մեջ դրանք խմբված են «Քնած իշխանը» ընդհանուր խորագրի տակ³ և ունեն հետևյալ համառոտ դիպաշարը (սյուժեն)։

Ըստ գուշակի⁴՝ ընտանիքի մինուճար աղջիկը 7 տարի (տարբերակներում՝ 3–4 տարի կամ նույնքան ամիս, 7 օր) պիտի մեռել լողացնի: Աղջիկը խելքը թոցնում է, ընկնում դաշտ ու ձոր: Ծնողներն էլ հետևում են նրան: Աղջիկը հասնում է մի քարայրի (պալատ, քոչկ ու սարայ, երկաթե դարպաս, անդուռ-անլուսամուտ, պարսպապատ տուն) և երբ հենվում է պատին, մի անտեսանելի դուռ է բացվում ու նրան ներառում իր մեջ: Մնալով ներսում՝ աղջիկը հայտնաբերում է մի մահացած (կիսամեռ, վիրավոր) երիտասարդի (տարբերակ՝ մի կտոր թոք), որին յոթ տարի խնամում է: Նա թափառախմբից «մին լագ-յան վրեսկով» («ուր կըշքոնքով ոսկի», «քսան օսկի փարա») գնում է մի որբ գնչու աղջկա (տարբերակներում՝ «մրթթըպու կէչկէ», «մըտըրբու ախչիկ», «բոշա», «բոշի գյաճկե», «դարաչի»)՝ որպես իրեն գրուցընկեր («Ըսկի չէ, ընծիկ հընկերըմ կէղնի, զիմ սիրտ կբանա»)՝ Յոթ տարին լրանալուց մի քանի ժամ պակաս, աղջիկը «բոշային» թողնում է մեռելի մոտ, իսկ ինքը կարճ ժամանակով դուրս գալիս: Տղան կենդանանում է և տեսնելով գնչուհուն իր կողքին՝ կարծում է՝ նա է իրեն 7 տարի պահել, խնամել ու ամուսնանում է հետը: Վերադառնում է խնամառու աղջիկը, որին «բոշան» ներկայացնում է իբրև իր ծառա (տարբերակներում՝ «բեսլամա», «ճարիյա», «բարդաստի», «խզմաթքար», «խալայեդ»): Աղջիկը ճշմարտությունը բացահայտում է սիրտ, համբերության խոսող տիկնիկի («սավդա», «սափուր», «սամուր խրճիկ»⁶), համբերության թասի ու հայելու («սապրի թասըմ, սապրի փուչախըմ»⁷), նռան, դանակի ու տիկնիկի («շհանոռնը, չախկու, բուրընտիկին»⁸), երկչոտ տիկնիկի («Լււրււրու խրոծիկ»⁹), համբերության տիկնիկի, կճուճի, մի գավաթ թույնի («մէկ սապրի խրճիկ, մէկ էլ բըղբըղիկ, ֆինճան մէլ աղու»¹⁰) միջոցով¹¹, իսկ մեկ այլ տար-

² H.-J. Uther, p. 519.

³ Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. V, - 30, հ. VI, - 8, հ. X, - 19, հ. XI, - 37, հ. XII, - 44, հ. XIV, - 15, Էմինեան ազգագրական ժողովածու (այսուհետև՝ ԷԱԺ), հ. Դ, - 26, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 19, - 9(11), Երևան, 1999, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ԲԱ), Գ. Ստեփանյանի ֆոնդ, FFXI.3391–3394:

⁴ Գուշակն ագռավն է (ՀԺՀ, հ. VI, - 8), ճնճղուկն է (ՀԺՀ, հ. X, - 19), ջրի կժի մեջ ընկած ակն է (ՀԺՀ, հ. XII, - 44), ջրի ճամպին ընկած գանգն է (ՀԺՀ, հ. XI, - 37):

⁵ ՀԺՀ, հ. XII, էջ 357:

⁶ ՀԺՀ, հ. X, էջ 89–91, հ. XI, էջ 337–342: «Խրճիկ Բլ. Բղ. Դվ. Թեհ. Խ. Վն. [խոծիկ] պաճուճապատանք, խամաճիկ, տիկնիկ. գուզլա» (Հր. Ա ճ ա ո ե ա ն. ԷԱԺ), հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 496:

⁷ ՀԺՀ, հ. XII, էջ 356–359:

⁸ ՀԺՀ, հ. VI, էջ 55–57:

⁹ ՀԺՀ, հ. XIV, էջ 186–193:

¹⁰ ԷԱԺ, հ. Դ, էջ 174–176:

բերակում՝ գնչուհու հաց ուտելու ձևից¹²: «Բոշան» արժանի պատիժ է ստանում, աղջիկն ամուսնանում է երիտասարդի հետ:

«Լա;բլա;բու խրոճիկ» հեքիաթում նախամուսնական ծես անցնող աղջկա ծնողները նրա հետ հավասարապես տանջվում են, փոխում են բնակության վայրը, փորձում են շրջանցել վտանգը, բայց երբ աղջիկը հայտնվում է ակնթարթորեն բացվող ու փակվող քարայրի ներսում, «էսա ախչրկան խեր-մերն են, կտիսնան որ ախչիկ չէկավ, կէլնեն կի-նեն ըգտեխ. ախչի կ, ախչի կ, ախչիկ չկա: Կուլա;ն, կմոմբոան, կտրփեն մեչ ուրենց գլը-խուն, ֆայդա չանե, ախչիկ չերևա: Չուր իրիկուն կուլա;ն, կֆրոան, չեն կանա կընտընե, ծեռ կքյաշեն, փեռ-փեռման կթողնին, կտա;ռնան ետ:

Իրիկն ի կասի.– Կընի կ, աստրծու խեռ խաղալ չէլնի, ինչ որ գլըրուկ ի մարթու գլըրիս էն պիտի էլնի, ճար չըկա»¹³:

Պատուհասված աղջիկը քարայրի ներսում հայտնաբերում է «ջրհեղ-ջիվան տղե մե՝ յարալու-փարալու, քրքրուկ ու հլիլուկ, սաղ ջանդակ ծակծկուկ, ասղան քթի տեղ սալա-մաթ չկա: Աղջկա սիրտ կը մոմոա վըր տղին, կէրթա կը հասնի, գտղի գլուխ կը վերու, կը դնե վըր ուր չոքին, ցերեկն անքուն, գիշեր՝ կես-քուն, թամամ յոթ տարի էղ թաուր կը պա-հե գհիվանդ»¹⁴:

Աղջիկը յոթ տարի խնամում է անշարժ տղային՝ սպասելով իր բախտ– «Վիճակին» (հմմտ. Համբարձման կճուճի բախտանշանին ուղեկցող ծիսական երգի անկանխատեսելի բովանդակության հետ), որին մի ակնթարթում տիրանում է գնչուհին՝ օգտվելով խնամակալ աղջկա անկեղծությունից. «Աղջիկ տեսաւ օր եօթ տարին թմաւ, մեռուկ Մանուկ յարութեն պտի առի, կէչկին ասաց.– Մանուկի գլօխ դիր վըր քու չոքին. ես էրթամ գլօխ լու-ւամ, սերսրփիմ յիգամ. որ Մանուկ մէ խեռ ժած կուգեայ. ընձի իմաց մի՛ տու, որ մե՛կ էլ ժած կուգայ, ընձի իմաց տուր, որ ես գեամ. Մանուկ յարութեն առնի, մենք իսասինք մեր մուրազին»¹⁵:

Երբ Մանուկը հարության նշաններ է ցույց տալիս, գնչուհին դիտավորյալ չի հայտնում աղջկան և, ներկայանալով իբրև խնամառու, ամուսնանում է տղայի հետ. «Մեռուկ Մանուկ էրկու խեռ ժած կուգեայ, կէչէն աղջկէն չիմցուցայ. Մեռուկ Մանուկ կէլի յարութեն

¹¹ «Խուրճկուլուլու» անվան սկզբի մասի մեջ երևում է «խրճիկ» բառի արմատը՝ «խուրճ», որը նշանակում է տիկնիկ: «Խուչկուրուրու» բառի մեջ «խուչ» աղճատումն է «խուրճ» բառի: «Պուրպատիկին» անվան մեջ «պուրպա» մասը «պուպրիկ», «պուրպիկ», «պուպուկ» ձևերով նշանակում է տիկնիկ (հմմտ. գերմ. Puppe, ֆրանս. poupée): «Ուրբաթեկին» անունը հավանորեն աղճատումն է «պուրպատիկին» բառի: «Պուրպատիկին» բառը, սակայն, կարող է և աղճատումն լինել «բուրբատիկին» բառի, որը գավառական արտասանությամբ դարձած է «պուրպատիկին» (Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 169):

¹² ՀԺՀ, հ. V, էջ 633–636:

¹³ ՀԺՀ, հ. XIV, էջ 187:

¹⁴ ՀԺՀ, հ. X, էջ 90:

¹⁵ ԷԱԺ, հ. Դ, էջ 175:

խրտ կէջին կառի»¹⁶: Ծիսական լվացում անցած, մաքրված աղջիկը գալիս և տեսնում է, որ «բռշան» խաբեությանը տիրացել է իր բախտին:

Բուլանըխից գրառված «Մամուր-սամուր խրճիկ» հեքիաթում պարզորոշ խոսվում է նախամուսնական նվիրագործման ծես անցնող տղայի մասին, ում հիվանդությունը յոթ տարին լրանալուն պես անցնում է, տղան կախարդանքից թուլյազերծվում է, «թլիսմ կավրի, սրփ ու սաղ գելնա նստի, հմա կը բռնե գբռշի աղջրկա ճակատ կը պագե, կըսե:

– Մատամ, օր դու իդա յոթ տարի գիսի պահեր ու պաշտպաներ իս, ես՝ քրզի, դու՝ ընձի»¹⁷:

Արցախից գրառված «Անբախտ ախճիգը բախտավերվում ա» հեքիաթում, երբ մահացած տղան սկսում է կենդանության նշաններ ցույց տալ, «էտ հային ախճիգը սկսում ա հմանչիլը, ուրա;ն մըթկըմը ասըմ ա. «էս տըղան վար եր կենա, պա համո թ չի, հի նչ կասե»¹⁸: Երբ մի օր է մնում, որ տղան կենդանանա, «հային ախճիգը» տղային լողացնում է, շորերը դնում կողքը և խուսափման սովորույթի համաձայն՝ ամաչելուց անցնում է կողքի սենյակը, իսկ «դարաչի ախճիգը»՝ «բռշան», կանգնած է մնում տղայի գլխավերևը և ուշքի եկած տղայի մոտ տպավորություն է ստեղծում, թե ինքն է նրան յոթը տարի լողացրել, պահել և արժանի է նրա սիրուն¹⁹:

Հեքիաթներից մեկում տղան երախտագիտությունից դրդված համբուրում է «բռշայի» ճակատը և ասում. «– Ախչիկ, քյանի որ տյու էսա աղեկութեն արեցիր իետ զիկ, զիկ էսա կախարդութից ազատեցիր՝ էլ խորոտ-գյեշ չեմ աչկե, տյու զիկ կընիկ, ես քյե իրիկ»²⁰:

Եվ քանի որ ամուսնության հետ կապված ծեսերը ենթադրում են նաև գլխի ծանր հարդարանքներ, որոնցով կապվում են քիթն ու բերանը և որոնց միջոցով օրինականացվում են չխոսկանության հնամենի սովորությունները²¹, ուստի աղջկա լուրջամբ ամրագրվում են գնչուհու անկաշկանդ սադրանքները:

Հայկական միջավայրում դարեր շարունակ գոյատևել են գնչուների էթնիկական խմբեր, որոնց հետ փոխհարաբերությունների արդյունքում վերջիններիս նկատմամբ մշակվել է պատկերացումների որոշակի համալիր, որի համաձայն՝ «գնչուհին դիտվել է որպես գորեղ, սուր և չար լեզվի կրող: Այս պատկերացումը պայմանավորված էր վերջինիս արագախոսությամբ, խոսելիս երբեք չշփոթվելու և չվարելու, ժամանակին անհրաժեշտ պատասխան գտնելու և հաճախակի չարամիտ պատասխան տալու ունակությամբ: Վերջինիս խոսուն վկայությունը հայոց մեջ տարածված «բռշի պես խոսքը ջերումն է» ա-

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ ՀԺՀ, հ. X, էջ 90:

¹⁸ ՀԺՀ, հ. V, էջ 634–635:

¹⁹ Նույն տեղում, էջ 635:

²⁰ ՀԺՀ, հ. XIV, էջ 189:

²¹ Վ. Բ դ ո յ ա ն. Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 127–128:

սույթն է, կանանց «դարաչի» պիտակավորումը»²², ինչը իր կնիքն է թողել նաև հայկական հեքիաթներում:

«Մրեռային հու ախճրկանը հաքյաթում» նույնպես խնամակալ աղջիկը ամաչելուց գնում է հեռու տեղ կանգնում, իսկ խորամանկը իր պահանջներն է առաջադրում. «Ես ըմ քյեգ օխտը օր, օխտը քշեր լղըցըրալ, սրղացալ ըս, ես քու կնեգյրտ ըմ տաննալու»²³:

Մեկ այլ հեքիաթում հենց նոր հարություն առած տղայի ներկայությամբ բոշան գոռալով սպառնում է հայի աղջկան, նրան ներկայացնելով որպես մի անբանի, որն իբր ամբողջ օրը քնում է և թերանում ծառայի իր պարտականությունները կատարելու մեջ. «Ու մուդախոր խեռըլուկ, ակխա ը, տե շուտ էլի խացի թաղա;րաւք տե, անթի ենքյ, որ էտա քյրնելու թապիյաթ չթողնես, քյե կմըլեմ տյուս, խեղճ ես»²⁴:

Ուշագրավ է, որ «Լաւրաբու խրոծիկ» հեքիաթում աղջիկը մեռած կամ կիսամեռ տղայի փոխարեն վերմակի տակ տեսնում է մի կտոր թոք, որը հազիվ է շնչում («մեչեն նաֆաս կէլնի»): Սկզբում նա սարսափում է, իսկ հետո սկսում է մտածել, թե տեսնես ինչ հանցանք է գործել այս թոքի տերը, որ մարմինը անխնա կտրտել են և միայն այս փոքրիկ կտոր թոքն են թողել, որ շարունակ տանջվի. «Էս ի նչ կանդա;ր մեղավոր էլեր ի էսա թոքյի տեր, որ ջանդակ բիթո;ւն կըտրոտեր են, կըտորներ վով կիտի որ աշխրրներ ցրվրեր են, մընացեր ի էսա մեկ կըտոր թոքյ. հա;լա; աստված իտոր խոգյին չառե, թողե որ չարչըր-վի»²⁵:

Հնդեվրոպական բանահյուսական ավանդույթում ընդունված է մարմնի առանձին մասերի՝ մազի, եղունգի, կաշվի միջոցով ամբողջի ընկալման պատկերացումը, ինչը և տեսնում ենք վերոնշյալ հայկական հեքիաթում, որտեղ բզկտված թոքը խորհրդանշում է նվիրագործյալ տղային: Եթե քննվող հեքիաթախմբի փոփոխակներում նախամուսնական փորձությունների համապատասխան փուլ անցնող աղջիկը յոթ տարի մեռել է լողացնում և խնամում, ապա «Լաւրաբու խրոծիկ» հեքիաթում աղջիկն իջեցնում է մեռելի գլխավերևում կախված նվագարանները՝ «տյուֆն ու քյամանին» և յոթ տարի շարունակ՝ գիշեր ու ցերեկ, մի կողմից լացում է, մյուս կողմից՝ երգում ու նվագում:

Ի դեպ, դիցաբանական պատկերացումների համաձայն՝ մարդը, նույնանալով բնությանը, իր առօրյա կենսընթացում խաղարկում է արևածագն ու մայրամուտը, կյանքն ու մահը²⁶: Խոսքը կյանք է. խոսել նշանակում է արևի պես փայլել²⁷, չէ՞ որ մեռածը չի խոսում, առավել ևս աղջկա կրած չարչարանքներին զուգահեռ բարձր ձայնով և երաժշտութ-

²² Ա. Խ ա չ ա տ ր յ ա ն. Գնչուհին հայոց պատկերացումներում. – Հայ ժողովրդական մշակույթ, Հանրապետական գիտական նստաշրջան IX, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997, էջ 19:

²³ ՀԺՀ, հ. VI, էջ 56:

²⁴ ՀԺՀ, հ. XIV, էջ 189:

²⁵ Նույն տեղում, էջ 191:

²⁶ О. Фрейденберг. Поэтика сюжета и жанра. М., 1997, с. 52.

²⁷ Նույն տեղում, էջ 69–71, 229:

յամբ ուղեկցվող խոսքի ազդեցությամբ թոքը մեծանում է և վերածվում մի կտրիճ երիտասարդի:

Այս հեքիաթում կիրառվում են բանահյուսական մտածողությանը բնորոշ անձի կամ երևույթի չափերի փոքրացումը՝ լիտոտան, և դրան ուղղակիորեն հակադրվող մեծացումը՝ չափազանցությունը (հիպերբոլը). «Ես որ բաշլայեցի խաղ ասել՝ տիսա որ էտա թոքյի կտոր յավաշ-յավաշ ճոճացավ, էլա;վ մեյ խատ բյբյգյիթ մարթ, աման հալա; խոգյի չըկեր մեշ, խեռըլուկի պես էր»²⁸:

Եվ ինչպես մեռնող և հառնող հին եգիպտական աստվածության՝ Օսիրիսի մասին առասպելում Իսիդան հավաքում է երկրի տարբեր կողմերում ցրված Օսիրիսի մարմնի տասնչորս մասերը, ի մի բերում բոլորը, վերստեղծում մարմնի ամբողջականությունը, որպեսզի հնարավոր դառնա նրա հարությունը, այնպես էլ նվիրագործյալ աղջիկը, յոթ տարի շարունակ նվազելով և խաղ ասելով, հոգ է տանում գաղտնաձիսային փորձություն անցնող տղայից մնացած մի կտոր թոքի համար, որը կազդուրվելով՝ վերականգնում է մարմնի օրգանների ամբողջականությունը, և այն անհրաժեշտ միասնական համակարգը, որից հետո միայն, հնագույն հավատալիքների համաձայն, հոգին ճանաչում է մարմնին և հարություն տալիս նրա տիրոջը²⁹:

Հարություն առած հերոսը պատվիրում է «բոշա» կնոջը, որ ուշադիր լինի ծառայի նկատմամբ: Արծկեի բարբառով պատմված «Մեռուկ Մանուկ» հեքիաթում համանուն հերոսը «ամեն օր կէկին կասայ. – Էդ ճարին (ծառային – Թ. Հ.) խա ց տու, ջու յ տուր, մեղք ա»³⁰: Այնինչ հենց ինքը՝ գնչուհին, սեղանի շուրջը հաց չի ուտում, այլ հացը թաքցնում է «օթախի քյունջերըմը» (անկյուններում) և իբր թե այն մուրում է և հետո միայն ուտում³¹: Հեքիաթը համահունչ է գնչուների վերաբերյալ մեզանում ձևավորված այն պատկերացմանը, ըստ որի՝ «գնչուհին համարվել է աներես, պնդերես, անամոթ: Դա մուրացկանությամբ զբաղվելու ու շորթելու հակում ունենալու հետևանքն է, որը հայերի մեջ արմատավորել է «բոշի երես», «բոշի խախալ»– շատ պնդերես, անամոթ լինելու դարձվածային համարժեքները»³²:

Ուշագրավ է նաև, որ տղան ու խնամակալ աղջիկը հիմնականում իրար հետ խոսում են միջնորդավորված ձևով՝ գնչուհու միջոցով, քանի որ ավանդական հայ հանրություն կնոջ շփումները տղամարդու հետ սովորության իրավունքով խիստ չափավորված էին³³:

²⁸ ՀԺՀ, հ. XIV, էջ 191:

²⁹ М. М а т ь е. Древнеегипетские мифы. М.–Л., 1956, с. 53.

³⁰ ԷԱԺ, հ. Դ, էջ 175:

³¹ ՀԺՀ, հ. V, էջ 634:

³² Ա. Խ ա չ ա տ ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 19:

³³ Հարսն ընտանիքի մեծահասակների և, հատկապես, տղամարդ անդամների հետ հաղորդակցվում էր դեռահաս երեխաների միջոցով կամ երեսը շրջելով դեպի պատը՝ խոսում էր

«Սոյլամագ խանրմի հեքիաթում»³⁴ խուսափման սովորույթով հարսը կեսրարի հետ չէր խոսում. «Հարսը ընչար էտ օրը կեսառի հետ խոսացած չէր»³⁵, էլ չենք խոսում այն մասին, որ խանուրմի Սոյլամագ անունը հենց նշանակում է չխոսկան:

Գնչուհին պատվիրում է, որ ամուսինը գնա քաղաք, առևտուր անի և իր համար գույնզգույն, գուլավոր կտավ բերի. «Գնա՛, ընձի զաղ-զաղ մանուսայ առ արի՛, էնիմ շոր»: Մանուկը, որ մինչ այդ գիտեր, թե իր կինը հայուհի է («Մանուկն ա, գինայ, թե կէչկէն խայ ա»), զարմանքով ընդդիմանում է. «Էդի քրդու շոր ա, խայի շոր ուզայ, բերեմ»³⁶: Հետո համարող կնոջն ասում է, որ իր ուզածը կբերի, միայն թող ծառային էլ հարցնի, թե նրա համար ինչ բերի քաղաքից: Հեքիաթի բոլոր փոփոխակներում աղջիկը ոչինչ չի ուզում, միայն խնդրում է իր համար բերել «Մաբրի խրծիզը»՝ համբերության տիկնիկը: Հեքիաթի այս դրվագը խորհրդանշական է նաև օտար-յուրային էթնիկական ընկալումների առումով, որտեղ թվում է, թե հանդուգն գնչուհին հակադրված է հանիրավի պատուհասված հայուհուն ոչ միայն իր հագուստ-կապուստով, տարագով, անկանոն սնվելու մշակույթով, այլև խարդախ ու նենգ վարվելակարգով: Իրականում «ենթամշակույթները հայտնի չափով ինքնավար են, փակ և չեն հավակնում փոխարինել տիրապետող մշակույթին»³⁷ և պատահական չէ, որ մշակութաբան Պ. Գուրնիչը, խոսելով էթնոսի ներսում կանոնների և բարոյական նորմերի առանձնահատուկ կողմնադիմացի մասին, օրինակ է բերում գնչուներին, որոնք թափառախմբի ներսում կատարած գողությունը գնահատում են որպես հանցագործություն, սակայն խաբելը, «ուրիշներից գողանալը անվայել բան չեն համարում»³⁸, ինչը տեսնում ենք նաև հեքիաթներում:

«Լաբլաբու խրծիկ» հեքիաթում աղջիկը տեսնում է, որ իր յոթ տարվա չարչարանքը բոշա աղջկա «կրսմաթն» է դարձել, «մուխ գլրխուց տյուս կուտա, աման ծեն չի խանե, քյանի որ լաճ հարիր էր, քյամանին մրտըրբու ախչրկան ծեն էր տիսե, ուր ցավ կքյաշի ուր ատամ, կասի. «Ի՛նչ անեմ, աստված ըսըսկընն էր գլրբե իմ գլրխուն, ըսըսկընն էլ պիտի էլներ»³⁹:

Մեզ հետաքրքրող հեքիաթներում կենդանացած հերոսը գնում է քաղաք առևտուր անելու և իր գնչուհի կնոջից պատուհասված աղջկա խնդրանքով որոնում է «Մաբրի խրծիզը»՝ համբերության տիկնիկը, որը, լինելով տնայնագործական արխաիկ արտադրանք, վկայում է ավանդական կենսընթացում չխոսկանության պատճառով տիկնիկների պա-

հագիվ լսելի ձայնով: Մեր կարծիքով՝ չի բացատրվում, որ նման դեպքերում ասելիքը կարող էր փոխանցել իբր թե տիկնիկի հետ խոսելով:

³⁴ ՀԺՀ, հ. I, էջ 382–399:

³⁵ Նույն տեղում, էջ 385:

³⁶ ԷԱԺ, հ. Դ, էջ 175:

³⁷ П. Г у р е в и ч. Культурология. М., 2001, с. 153.

³⁸ Նույն տեղում:

³⁹ ՀԺՀ, հ. XIV, էջ 189:

հանջվածության, օժիտի մեջ դրանց դնելու ծիսական նշանակության մասին: Տիկնիկը յուրօրինակ գրուցրնկեր էր, որին խաղացնելով՝ հետը խոսելով, մեկուսացած դեռատի հերոսուհին պիտի փորձեր հաղթահարել իրեն բաժին հասած փորձությունները: Տուրուբերան-Մուշից գրառված «Մապր սալամաթ»⁴⁰ հեքիաթի վերնագիրը, որը նշանակում է՝ «համբերությունը կյանք է», դարձյալ համադրվում է «սաբրի (սապրի) խրճիզի» գաղտնի-մաստին:

Ռուսական ժողովրդական «Գեղեցկուհի Վասիլիսան» հեքիաթում վաճառականի կինը մահվան մահճում վերմակի տակից հանում է մի տիկնիկ, հագնում և մայրական օրհնության հետ այն հանձնում իր դստերը՝ Վասիլիսային՝ պատվիրելով նեղության մեջ ընկնելիս նրան կերակրել և հետնել խորհուրդներին: Տիկնիկը աղջկան մշտապես սատարում է, վշտի մեջ մխիթարում, իսկ Վասիլիսան նրանից երբեք չի բաժանվում⁴¹:

«Տիկնիկի հետ շփվելու իրավունքը պատկանել է միայն հարսին, որն ամբողջ կյանքում պետք է նրան պահեր ու պահպաներ»⁴²:

Հեքիաթների բոլոր տարբերակներում շուկայում առևտուր անելիս հարուցյալ տղան կամ մոռանում է կատարել աղջկա խնդրանքը և միայն ուշացումով է հիշում «Մաբրի խրճիզի» մասին, որի պատճառով կես ճանապարհին ձիու ոտքերը քարանում են⁴³, առջևը փուշ է բուսնում, հետևը՝ վարդ⁴⁴, կամ էլ երկար որոնելուց հետո դժվարությամբ է գտնում այն, ինչն էլ հուշում է, որ այդ տիկնիկները ազատ վաճառքի ենթակա չեն և դրանց արտադրությունը, գաղտնածիսային բնույթից ելնելով, առանձին անհատների մենաշնորհն է եղել⁴⁵:

Մարգիս Հարությունյանի բանավոր վկայությամբ՝ դժվար ձեռք բերվող որևէ իրի, առարկայի առնչությամբ ժողովուրդն ասում է՝ «շինեցիր խամխամու խրճիկ»⁴⁶:

«Մաբրի խրճիզը» պատրաստում էին հանրության մեջ հեղինակություն վայելող փորձառու տարեց կանայք՝ գաղտնի պայմաններում: Տիկնիկի կորուստը կամ անհետացումը հավասարազոր է եղել դժբախտության. «Օժիտի տիկնիկը նոր ստեղծված օջախի պահ-

⁴⁰ ՀԺՀ, հ. XIII, էջ 295–299:

⁴¹ Народные русские сказки, из сборника А. Афанасьева. М., 1991, с. 61–66.

⁴² Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Օժիտի տիկնիկը Գյումրիում. – Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2004, էջ 55: Բ դեպ խորհրդային տարիներին հարսանեկան մեքենան զարդարող տիկնիկը, ըստ բանագետ Ս. Ղազիյանի Արցախում կատարած գրառումների, հարսանեկան արարողության ավարտին քավորկնոջ կողմից հանդիսավորությամբ հանձնվում էր նորահարսին, որը այն մշտապես պահում էր իր ննջարանում:

⁴³ ՀԺՀ, հ. XI, էջ 339:

⁴⁴ ՀԺՀ, հ. XII, էջ 358:

⁴⁵ ՀԺՀ, հ. X, էջ 90, հ. XI, էջ 339:

⁴⁶ «Խամխամու խրճիկը» նույն «Լա;բլա;բու» կամ «Մաբրի խրճիկն» է՝ Խնուսի, Մուշի և Ալաշկերտի բարբառով: Այս տեղեկությունների համար շնորհակալ եմ բանագետ Ս. Հարությունյանին:

պանողն ու ջերմացնողն էր, միջնորդը՝ գերդաստանի կին հովանավորների առաջ, որը հարսին պետք է պահպանի չար ուժերից, օգնի նրան պտղավորվելու և ծննդաբերելու»⁴⁷:

Հեքիաթներում «Մաբրի խրճիզ» տրամադրողներն իրենց պարտքն են համարում գնորդին հիշեցնել, որ այդ տիկնիկը պահանջողի նկատմամբ ուշադիր լինեն, որովհետև նրա հոգին փոթորկված է, համբերությունը՝ հատած, և ուր որ է պիտի պայթի:

Տղան «սալախ կենի դուքրներ, կեսա. – Գյալո՛, Մափուր-սափուր խրցիկ, դո՞ր կա:

Դոր կերթա, Մափուր-սափուր խրցիկ չգտնա: Կերթա մե դուքան մե քաղբից դուրս ա, կեսա.

– Գյալո՛, Մափուր-սափուր խրցիկ չկա՞ օղի:

Կեսա. – Կան օղա, տղա, կտանիս վի՛ն:

Կեսա. – Կտանիմ իմ բարդաստուն:

Կեսա. – Տղա՛, էդի դարդու ա, օր գէտի ուզած ատօր կտանիս, մուղաթ կենաս իդա տի-րոջ»⁴⁸:

«Յոթ տարվան մեռել» հեքիաթում «Թուճարն ասեց էդ մարդուն. «Վեր կտանես գէդի, է-դոր տեր դարդլի է, ուր դարդեր պիտի գանգտի սապրի թասին, սապրի փուչախին՝ մուխ-յաթ մանցի օր չպատռի, խըլիս ձեռքեն»⁴⁹:

Օրվա մեծ մասն իր անկյունում մեկուսացած, ձայնագուրկ հերոսուհին վերցնում է խրճիկը և մի մութ անկյունում նրան պատմում, թե ինչպես ինքը հայտնվեց այդ տանը, յոթ տարի խնամեց կիսամեռ տղային, եկավ բոշա աղջիկը և տղային «իր ձեռնէն առավ»⁵⁰: Ամեն անգամ աղջիկը հարցնում է տիկնիկին՝ ես պատմվեմ, թե՞ դու: Տղան թաքստոցից ասում է. «Դու մը՛ պատռի, դու մը՛ պատռի, թը բըրբըրիկ, սապրի խրճիկ պատռին, դու մը՛ պատռի»⁵¹: Ասելուն պես «բըրբըրիկ, սապրի խրճիկ պատռան յիրարուց»⁵²:

Զնոռանանք, որ հայոց բանավոր ավանդության մեջ ամուսնությունն ու երջանկությունը կանխորոշվում են վիճակախաղի ծիսական տիկնիկի միջոցով, որին ամրացված կճուճի (հավգիր) մեջ աղջիկները գցում են իրենց բախտանշանը⁵³, ինչին ուղեկցող քառատող երգն էլ պիտի հուշի իրենց բաժին բախտը: Վասպուրականում Համբարձման չորեքշաբթի օրը աղջիկները կճուճը զարդարում են ծաղիկներով և պատրաստում «Վիճակը», որը ոչ

⁴⁷ Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Օժիտի տիկնիկը Գյումրիում, էջ 55:

⁴⁸ ՀԺՀ, հ. XI, էջ 339:

⁴⁹ ՀԺՀ, հ. XII, էջ 358:

⁵⁰ ԷԱԺ, հ. Դ, էջ 176:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Նույն տեղում: Ուշագրավն այն է, որ Հանս Քրիստիան Անդերսենի «Ջրահարսը» հեքիաթում համանուն հերոսուհին իր ձայնը զոհաբերում է ծովի վիուկին և լեզուն հանելով համաձայնում է, որ վիուկը ծայրատելով իրեն համբացնի, միայն թե իր ձկան պոչը երկատվելով փոխակերպվի ոտքերի, և ինքը հասնի հողեղեն արքայազնին (Հ ա ն ս Քրիստիան Անդերսեն. Հեքիաթներ, Երևան, 2005, էջ 48):

⁵³ Մ. Աբեղյան. նշվ. աշխ., հ. Է, էջ 56–57:

այլ ինչ է, «եթե ոչ խաչաձև փայտի վրայ շինուած մի անշունչ էակ, պճնուած ոսկիներով, ուլունքներով և գունաւոր ժապաւէններով, հագնուած է որպէս մի մանկամարդ կին»⁵⁴: Հինգշաբթի գիշերը աղջիկները «Վիճակը» թողնում են բաց երկնքի տակ, ծիսական երգեցողութեամբ բախտ են աղերսում աստուերից, և ողջ գիշեր աչալրջորեն հսկում են իրենց պահուստը՝ պահպանելով այն տղաներից:

Հետաքրքիր է նկատել, որ հեքիաթի երկու՝ «Մեռուկ Մանուկ» և «Յոթ տարւան մեռել» փոփոխականներում համբերության տիկնիկը կպած է թասին, ինչպէս Համբարձման «Վիճակի» տիկնիկն է ամրացված կճուճին: Եվ ինչպէս բախտագուշակման ծեսի վերջում ամեն մեկը նրա վրա կախած իր զարդն էր վերցնում, և մերկացած տիկնիկը մաս-մաս էր արվում և թաղվում գերեզմանոցում, կամ թողնվում դաշտում ու սրբավայրերում, այնպէս էլ «Մաքրի խրճիզն» է պայթում («կէղնի փշուր-փշուր»⁵⁵, «կէղի խազար կտոր»⁵⁶) և մասնատվելով անջատվում վիճակահանության թասից:

Համբերության թասը լցվում է, թափվում, և ճշմարտությունը բացահայտվում է. «Իդա հախս տղեն դրան հետևեն կթոխ դուրս, կեսա.– Ախչիկ, քու գլխուն արևուն մեռնիմ, ես չգինիմք օր թը դուն էր, գինենք թե բոշի գյաճկեն էր ընձի պախեր էր, ընձի մեխք չկա, էնիկ լեզվով թարիֆ էնեց, դու լէ ծեն չէնեցիր»⁵⁷:

Պակաս ուշագրավ չէ, որ հայոց մեջ հայտնի տարբեր տոների ու ծեսերի ժամանակ օգտագործված բազմաթիվ տիկնիկներից մեզ հետաքրքրող «Մաքրի խրճիզը» (հարսի հովանավոր օժիտի տիկնիկը) «Լւիւլւիւրու խրճիկ» հեքիաթում կապվում է հոգու պաշտամունքին առնչվող թատերածիսական «Ղարագօգ» տիկնիկին, որոնցով հատուկ ներկայացումներ են տվել տարվա որոշակի տոներին՝ Բարեկենդանին:

Վերոնշյալ «Լւիւլւիւրու խրճիկ» հեքիաթում տղայի տունդարձի ճանապարհին անցնում էր գերեզմանի մոտով, և երբ նա նստում է հանգստանալու, հանկարծ բարձրաձայն հիշում է, որ մոռացել է «ծառայի» խնդրած «լւիւլւիւրու խրճիկը»: Հենց այդ պահին գերեզմանաքարի տակից՝ «գլեռոիմ քյարիմ տրկից մեյ թըրգանոց խրճիկը կթըռնի սյուս, կուգյա կկայնի էսա լաճուանճն, կասի. «Է՛յ ախպերացու, զիկ ընչի՞ կանչիցիր, լւիւլւիւրու խրճիկ էս էմ, ի՞նչ կուզիս»⁵⁸:

Ժողովրդական պատկերացումների համաձայն՝ մարդկանց և կենդանիներին կյանք տվողը հոգին է, որը մեռնելիս անջատվում է տիրոջից և շարունակում իր անտեսանելի կյանքը: Մակայն այն կարող է տեսանելի կերպարանք ընդունել՝ իբրև կենդանի կամ թռչուն (սև կամ սպիտակ): «Հոգին սովորաբար պատկերացվում է մարդկային կերպար-

⁵⁴ Վանայ սագ. Առաջին մաս, էջ 86:

⁵⁵ ՀԺՀ, հ. X, էջ 91:

⁵⁶ ՀԺՀ, հ. XI, էջ 342:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ ՀԺՀ, հ. XIV, էջ 189–190:

րանքով կամ իբրև մարմնակերպ մի բան, երբեմն մարմնից միայն քիչ ավելի փոքր»⁵⁹: Տեղին է հիշել, որ սովերների տիկնիկային թատրոնն իր ծիսական բնույթով նույնպես կապված է հոգու պաշտամունքի հետ, իսկ մարդկանց ու կենդանիների կերպարանք ունեցող տիկնիկները հոգիների միջոցով կարող են հայտնվել այս աշխարհում, սատարել և մասնակցություն ունենալ ծանր իրավիճակում հայտնված իրենց հարազատների կյանքին, ինչի մասին վկայում են Հայաստանում լայնորեն տարածված սովերների տիկնիկային «Ղարագօզ» ժողովրդական թատրոնն ու «Ղարագօզ» խաղացնողների մասին դաշտային ազգագրական նյութերը⁶⁰:

«Ըստ եղած բազմաթիվ տեղեկությունների՝ օժիտի տիկնիկն ունեցել է պատրաստելու ավանդության լայն դաշտ և առանձնահատկություններ»⁶¹: Այս առումով անփոխարինելի պիտի համարել հայկական հեքիաթների տարբեր դիպաշարերում մոտիվային մակարդակով ցրված համր կամ չխոսկան աղջկան խոսեցնելու, ինչպես նաև անվտանգության նկատառումներով գիշերն անտառում հերթապահող երեք ընկերների (եղբայրների) մասնագիտական հմտությունները գործի դնելու մասին պատմող արտասյուժետային դրվագները⁶², որոնք հրնթացս տեղեկություններ են հաղորդում նաև ծիսական տիկնիկի պատրաստման փուլերի ու եղանակների մասին: Վերոնշյալ հեքիաթներում առաջինը հերթապահում է հյուսնը (դուրգար, խառաղ), որը քունը հաղթահարելու նպատակով քոթուկից կին է տաշում: Հերթապահությունը շարունակում է դերձակը, որը տեսնելով փայտե կնոջը, որոշում է նրան շորեր հագցնել (տարբերակ՝ ծառի տերևից շոր է կարում)⁶³, վերջում հսկում է տերտերը, որի աղոթքով աստված շունչ ու հոգի է պարզում տիկնիկին: Լուսադեմին արթնանալով՝ ընկերները սկսում են վիճել, թե ում է պատկանում կինը և ում դերակատարումն է առաջնային նրա ստեղծման գործում: Հայաստանի պատմագագրական տարբեր շրջաններից գրառված մեզ հետաքրքրող այս հեքիաթներում գերազանցապես կարևորվում է տերտերի դերը, ում աղոթքով արարիչը կենդանություն է պարզում չոր փայտին: Նշված հեքիաթների բովանդակային ու կոմպոզիցիոն առանձնահատկությունները համարելով մեր ուսումնասիրության նպատակից դուրս՝ նկատենք

⁵⁹ Մ. Աբեղյան. նշվ. աշխ., հ. Է, էջ 17:

⁶⁰ Ժ. Խաչատրյան. Ջավախքի հայ ժողովրդական պարերը, ՀԱԲ, հ. 7, Երևան, 1975, էջ 107-109: «Ղարագօզ» պաշտամունքային տիկնիկը տարբեր ժողովուրդների մեջ ունեցել է իր գուգահեռները՝ Պանչը՝ Անգլիայում, Պոլչինելան՝ Բուլղարիայում, Դոն Կրիստոբել Պոլչինելան՝ Բուլղարիայում, Պոլչինելը՝ Ֆրանսիայում, Ադլեկինը՝ Բոլոնիայում, Գունսվուրստը՝ Գերմանիայում, Պետրուշկան՝ Ռուսաստանում, Կուշպարեկը՝ Չեխոսլովակիայում, Կարագօզը կամ Ղարագօզը՝ Թուրքիայում, Պեհլևան կեչելը՝ Պարսկաստանում, Պավանկաչալը՝ Ուզբեկստանում, Կարագյոզիսը՝ Հունաստանում և այլն (նույն տեղում):

⁶¹ Ժ. Խաչատրյան. Օժիտի տիկնիկը Գյումրիում, էջ 55:

⁶² ՀԺՀ, հ. I, - 29, հ. III, - 28, հ. IV, - 4, հ. VI, - 21, հ. XII, - 11, հ. XIII, - 39, ՀԱԲ, հ. 14, - 12, ՀԱԲ, հ. 20, 7, - 11, Գ. Տէր-Աղեքսանյան. Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, - 8, էջ 256-361 և այլն:

⁶³ ՀԺՀ, հ. II, էջ 39-49, հ. III, էջ 510-512:

միայն, որ տիկնիկը պատրաստում են գիշերը, մութ անտառում՝ մարդկանց աչքից հեռու, կրակի շուրջը, խիստ հերթապահության պայմաններում, ինչն էլ վկայում է տիկնիկի պաշտամունքային նշանակության մասին: Եվ քանի որ ընդհանուր առասպելաբանության մեջ ցանկացած իրի կամ առարկայի ստեղծումը արարման առասպելի ծիսական կիրառություն է, որի համատեքստում արհեստավորը համադրվում է արարչին, ուստի «ոչինչ չի կարող երկար գոյատևել, եթե օժտված չէ հոգով»⁶⁴, և «արարման առասպելը օրինակելի մանրակերտ (մոդել) կարող է ծառայել ցանկացած ծիսական արարողության համար, որի նպատակը ամբողջականության վերականգնումն է»⁶⁵:

Պատահական չէ, որ կրոնադիցաբանական պատկերացումների համաձայն, եթե հեքիաթի հերոսի մասնատված մարմինը հնարավոր է վերակենդանացնել միայն բոլոր մարմնամասերի առկայության դեպքում, ապա մարդու կրկնակ համարվող ծիսական տիկնիկի պատրաստման պարագայում գոնե մի մարմնամաս (քիթ, ականջ) պիտի պակասեր, որպեսզի տիկնիկը չկենդանանար և շարունակեր պահպանել իր էզոթերիկ (գաղտնախորհուրդ) գոյությունը:

Ամփոփենք. սովորութաիրավական արգելքների թելադրանքով հեքիաթի՝ ամուսնական փորձություններ հաղթահարող հերոսուհու միակ նեցուկն ու ապավենը նախամոր բարյացակամությունը ապահովող ծիսական տիկնիկն է, որի հետ զրուցելով՝ նորահարսը հաղթահարում է չիտսկանությամբ ու ներփակ կյանքով պայմանավորված հուզական լարվածության բեռը և ամենագոր տիկնիկից ակնկալում ճշմարտությունը բացահայտելու հնարավորություն:

ПЕРЕЖИТКИ ТРАДИЦИИ МОЛЧАЛИВОСТИ В ЦИКЛЕ СКАЗОК «САБРИ ХРЦИК» (КУКЛА ТЕРПЕНИЯ)

ТАМАР АЙРАПЕТЯН

Резюме

Ритуальные куклы – хрцики, в армянской фольклорной традиции имели широкое распространение и именно поэтому представлялись под разными названиями: Асил-Басил, Васил, Аклатиз, Хлвлик, Нурин, Чоли, Годи, Борбатикин и другие. Люди, веря в их магическо-ритуальную силу, посредством кукол, преклонялись богам, взывая о помощи, и просили у них богатого урожая, процветания, сохранения урожая, защиты от сил зла, удачи, плодородия и обеспечения справедливости. Согласно древним поверьям, куклы, которые считались магическими духами по материнс-

⁶⁴ М. Э л и а д е. Миф о вечном возвращении. Архетипы и повторяемость. СПб., 1998, с. 35.

⁶⁵ Նույն տեղում, էջ 43:

кой линии, помогали невестке в доме мужа – на чужой территории. Исследование пережитков поверий, связанных со свадебной куклой («Сабри хрцик» – кукла терпения) в цикле армянских народных сказок, дает возможность представить неписанные законы, регулирующие семейно-супружеские отношения в армянской традиции в течение тысячелетий.

THE SURVIVALS OF THE TRADITION OF TACITURNITY IN THE “SABRI KHRDZIK” (DOLL OF PATIENCE) FAIRY TALE CYCLE

TAMAR HAYRAPETYAN

Summary

In Armenian tradition ritual dolls–khrdziks were widely used and that is the reason they came under different names: Asil-Basil, Vasil, Aklatiz, Khlvlik, Nurin, Tcholi, Godi, Borbatikin and many others. Believing in the power of their deities, people used to appeal to gods through the dolls asking for rich harvest, fertility, good luck, justice and protection from evil forces. According to ancient beliefs dolls as miraculous spirits of maternal lineage were endowed with the ability to help the newly married woman in her husband’s home, a territory which is alien to her. The study of survivals of various beliefs connected with the dowry doll of a newly married woman (“Sabri Khrtsik” – the doll of patience) in Armenian fairytale cycle. The doll is regarded to be the soul of the mother ancestress supporting the newly married woman. The thorough analysis of the fairy tale cycle reveals marriage and family relation traditions among Armenians formed during centuries as well as unwritten rules regulating them.